

կը բժշկէ Վեսպասիանոսը : Կայսրը կ'ուզէ յայտնել իր երախտագիտութիւնը, կը թոյլատրէ անոր ազատօրէն քարոզել Աւետարանը Հռովմի մէջ, եւ ինքն իսկ կ'ուխտէ Փրկչին մահուան վրէժը լուծել և մկրտտուիլ իր Երուսաղէմէ դարձին :

Բազմաթիւ բանակով մը, իր որդւոյն՝ Տիտոսի հետ ան կը մեկնի : Պիղատոս իր կողմէն կը պատրաստէ յուսահատական դիմագրութիւն մը : Վաղաքին պաշարման ժամանակ պատահած սովին՝ հրեաները շատ տառապեցան, և որուն մանրամասնութիւնը կը նկարագրէ Յովսեպոս :

Երկու կայսրերը Վերոնի հետ Հռոմ վերադարձան և Պիղատոս բանտարկուեցաւ Վիեննայի մէջ, երկու տարի խիստ բանտարկութենէ յետոյ, այն աշտարակը որուն մէջ ան բանտարկուած էր, կ'ընկղմի Հռենոսի մէջ. տակաւին Վիեննայի մէջ կը տեսնուի, կ'ըսէ բանաստեղծը, այն ջրհորը՝ ուրկէ ան դահավիժեցաւ գժոխաց խորը :

Ըստ բանաստեղծին, Ս. Կղեմէս, կայսեր բժըշկութենէն յետոյ, Ս. պատկերը պահեց Հռոմի Ս. Սիմէոն եկեղեցիի խորանին տակ (D. Ap. F. հատ. էջ 1065—1068) :

4. Սիմոն Կիւրենացիին հանդիպման տեղը. — Իջնելով դէպի արևելք և միտելով հիւսիսային կողմը կը գտնուի բաղանիք մը, եւ անոր մէկ անկիւնը կայ մեծ սիւն մը, ուր կ'ըսուի թէ մեր Փրկիչը տկարութենէն և խաչին ծանրութենէն գետին ինկաւ. հոս ըմբռնեցին Սիմոն Կիւրենացին Քրիստոսի խաչը տանելու համար, որպէսզի Յիսուս խաչի ճանապարհին վրայ չի մեռնի : Ասոր հարաւային կողմը կը տեսնուի կա-